

53 Եւտոյ շըրջեալ ընդ նահանգն յայն
 Ի շէնս և 'ի գիւղս քաղաքս համայն
 Տուրս հաւաքէր ընդ այլ արդեան
 Իբր զամս երիս ընդ ամենայն :

54 Զոր բերեալ տայր Տեառն Յակոբու
 Պատրիարզին մեծի Պօլսու ,
 Որ եւ յըղէր զայն ընդ նաւու
 Յերուսաղէմ յետ սակաւու :

55 Անտի մուրհակ դայր վըճարման 1744
 Ծորրեալ ձեռամբ իսկ յատկական ,
 Գ՞րիգոր ռարբւոյն վեհանձնութեան
 Հաստեալ կնքով կարմրերփեան :

56 Սոյն այս մուրհակ անդէն գրրիւր
 Ի թ՞ուին Հայոց հազար հարիւր
 Որ յիննըսուն երրորդ եզրիւր
 Զոր յիս ունիմ ընդ այլ թուղթս իւր :

57 Ի ըստորեւ սոյն մարհակի
 Ընդ կընքոյ ինչ ծովագունի
 Չեռագիրն իսկ յայտ նըշմարի
 Նօրին Յակոբ Պատրիարզի :

58 Որով նա անդ խոստովանի
 Թէ Տէր Սարգիս եղբայրս յարգի
 Հասոյց ինեւ բաշխն անթերի
 Յերուսաղէմ յաջ Գրիգորի :

59 Զայս ինչ վասն այն աստ յիշեցի ,
 Զի լեզուն այն պապանձեցցի ,
 Որ բարբանջէր թէ փոր Սարգսի
 Լըցաւ բաշխիւք սուրբ քաղաքի :